

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՏ

ԱՐ. ՂԱՐԻՅԱՆ

Գ Ր Ա Կ Ա Ն
ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆԸ
5-7-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈԳՆՈՒԹՅՈՒՆ ՈՒՍՈՒՑՁԻՆ

491.99(077)
2-51

Լ Ո Ւ Ս Հ Ր Ա Տ

ՅԵՐԵՎԱՆ,

1939

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՏ

491.99 (տ7)

2-51

ԱՐ. ՂԱՐԻՔԱՆ

48

Գ Ր Ա Կ Ա Ն
ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆԸ
Ց-7-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈԳՆՈՒԹՅՈՒՆ ՈՒՍՈՒՑԶԻՆ

Լ ՈՒ Ս Հ Ր Ա Տ

ՅԵՐԵՎԱՆ

1939

19 JUN 2013

Արբազրիչ՝ Ա. ԳԱԼՍՏՅԱՆ



2105
39

Փրավիտի լիազոր Բ 1624 Տիրաժ 2000 Պատվեր № 71

Հայկական ԽՍՀ Ժողովրդների երաստապալիսուրյուն
Ենարերդային Հայաստան-ի տպարան, Յերնվան

10. 984

04 MAY 2010

1. ԻՆՉՊԵՍ ԱՇԽԱՏԵԼ V—VII ԴԱՍԱՐԱՆԵՐԻ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՅԵՎ ԳՐԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՆՈՒ- ԹՅԱՆ ԴԱՍԱԳՐԲԵՐՈՎ

Միջնակարգ դպրոցի 5—7 դասարաններում
գրականություն ավանդելու փոխարեն այժմ ա-
վանդվելու յե գրական ընթերցանություն: Վերջին
փոփոխությունը կատարված է այն նպատակով, վոր
վերջ արվի «գրական սոցիոլոգիզմ»-ին, այն վնասա-
կար ձգտումին, ըստ վորի 5—7 դասարաններում գրա-
կանություն ավանդող ուսուցիչներն աշխատում էյին
ավանդել գրականության պատմություն, հեղինակ-
ների պատմաքննադատական վերլուծություն և այլն:
Սյդ ձևով ուսուցիչների զգալի մասը, հատկապե-
րուհերը նոր ավարտողները, համալսարանական գրա-
կանության կուրսը և ավանդման մեթոդները փողադը-
րում էյին վոչ լրիվ միջնակարգ դպրոց: 5—7 դասա-
րանների աշակերտության գլուխը լցնելով նրան ան-
հասկանալի գաղափարներ, միաժամանակ աշակերտու-
թյանը չեր տրվում գրականության հիմունքներին տի-
րապետելու հնարավորություն: Աշակերտների մեծ
մասը չեր կարգում գրողների յերկերը, ծանոթ չեր
գրական տեքստերին, նա չեր ծանոթանում գրական
արվեստի և գեղարվեստական լեզվի հիմնական առանձ
նահատկություններին: Մյուս կողմից թույլ եր գըր-

ված լեզվի ավանդումը: Յեթե գրականության դասն անց եր կացվում ամուլ դատողություններով հեղինակի շուրջը, ապա լեզվի դասն անց եր կացվում միապաղաղ, հերթով կարգալու ձանձրալի աշխատանքով:

Քերականությունը դիտվում էր իբրև սխալաստիկ գիտություն, քերականական թեմային չեր նվիրվում ամբողջ դասը. քերականության ուսուցում ասելով հասկացվում էր քերականական կանոնն անդիր անելը և մի յերկու բանավոր Օրինակ գտնելը կամ հնարելը: Այս դեպքում, քերականությունը, կտրված լինելով գեղարվեստական և կենդանի լեզվից, դատում էր իրոք սխալաստիկ:

Այս տարի անհրաժեշտ չեղավ 5-7 դասարանների լեզվի և գրականության ուսուցման մեջ հիմնական չրջադարձ կատարել: Անհրաժեշտ է հիշել, չոր 5-7 դասարանները հիմնականում լեզվի ուսուցման և գրական յերկերը, տեսակները և տեսական տարրական սկզբունքները յուրացնելու դասարաններ են: Այս դասարաններում անհրաժեշտ է գրական յերկերը, գեղարվեստական կենդանի խոսքն ոգտադործել լեզու սովորեցնելու համար: Անհրաժեշտ է, վոր վոչ լրիվ միջնակարգն ավարտողը գառնա գրագետ խոսող և ղրագետ գրող, վորպեսզի նախապատրաստված լինի 8-10 դասարաններում գրականության պատմությունն անցնելու համար:

Այս տարի դասագրքերի հարցն անհամեմատ ավելի բարեհաջող լուծում է ստացել: 5-7 դասարաններն այս տարի ստացան քերականության, քերականական վարժությունների և գրական ընթերցանության դասագրքեր: Անհրաժեշտ է ոգտադործել այդ դասագրքերը և առարկայի ավանդումը ղնել բարձր մա-

կարդակի վրա: Այս դասագրքերով աշխատելու համար ուսուցիչը նախ և առաջ պետք է նախորոք լավ ծանոթանա նրանց, ուսումնասիրի ինչպես հարկն է: Դրանից հետո ուսուցիչն որիննտիր կերպով պետք է կադմի իր կիսամյա պլանը, նշելով մատավորապես, թե վո՞ր քերականական թեմային վո՞ր հեղինակի վո՞ր յերկը պիտի դուգադիպի: Նա պետք է լեզվի տարեկան ժամերը բաշխի քերականական թեմաների վրա, իսկ գրական ընթերցանության ժամերը՝ անցնելիք հեղինակների յերկերի վրա այն հաշվով, վոր քերականությանը և ուղղագրությանը նվիրվի լեզվին և գրական ընթերցանությանը պլանով տրված ժամերի կեսը (վեցորյակում 3 ժամ), գրական ընթերցանությանը՝ վեցորյակում 2 ժամ, իսկ մնացածը՝ գրավոր աշխատանքներին:

Քերականության կամ ուղղագրության յուրաքանչյուր թեման (նկատի ունենք միջին դժվարություն ունեցող թեման, որինակ, նախադասության ուսուցումը, յենթակայի ուսուցումը, ստորոգյալի ուսուցումը, մի հոլովի ուսուցումը, ը ձայնավորի ուղղագրության ուսուցումը, անանցավոր բառի ուսուցումը և այլն) պետք է խլի վոչ պակաս քան մեկ ժամ: Ըստ այնմ ժամանակը պետք է բաշխել մոտավորապես հետևյալ կերպ.

1. Կրկնողություն անցած այն նյութի, վորի վրա կառուցվում է նոր նյութի ավանդումը—5 րոպե:

2. Նոր կանոնը բացատրող լեզվական յերևույթների գիտում—5 րոպե:

3. Յեղրակացություն և կանոնի սահմանում—5 րոպե:

4. Բանավոր վարժություններ—5 րոպե:

5. Գրաւոր և գեղարվեստական հատվածի վրա վարժություններ 20-25 խումբներ:

Հին դասը հարցնելու և ամփոփելու դեպքում թեման կարելի չէ մշակել մեկ ու կես ակադեմիական ժամում:

Թեման անցնելու համար ուսուցիչը, վրա ամեն մի դասի նախորդը պատրաստվում է, պետք է դասադրքում բերածից տարբեր որինակներ ընտրի, ապա դիտումները կատարելուց հետո ասի սահմանումը: Դրանից հետո պետք է բաց անել տալ քերականության դասադիրքը, ասելով.

—Տեսնենք ինչպես է դրված դասադրքում:

Դասադրքում ուսուցիչը պետք է կարդա սահմանումը, բերած որինակները և զրանով հաստատի իր հաղորդածը: Ուսուցչի բերած սահմանումը վոչնչով չպետք է տարբերվի դասադրքի սահմանումից:

Պետք է վերջ տալ այն վնասակար պրակտիկային, յերբ վրոշ ուսուցիչներ իրենց սահմանումն են տալիս, դասադիրք չեն տալիս աշակերտի ձեռքը և իրենց չստուգված սահմանումը թելադրում են աշակերտներին՝ զրելու տետրերում: Թե՛ ուսուցչի թելադրածը և թե՛ աշակերտի զրածը մեծ մասամբ պատահական բնույթ են կրում և աշակերտներին չեն կարող սխտեմատիկ գիտություն տալ:

Կանոնը և սահմանումը քերականության դասադրքով մշակելուց հետո, ուսուցիչն առաջարկում է աշակերտներին, բանավոր կերպով որինակներ բերել: Յերբ համոզվում է, վրա բավական հասկացել են, այն ժամանակ նա բաց է անել տալիս «Քերականության և ուղղագրության վարժությունների դասադիրք» -ը

(5-6 դասարաններում) կամ «Շարահյուսության վարժությունների դասադիրք»-ը (6-7 դասարաններում) և առաջարկում աշակերտներին կատարել համապատասխան ձևով նշված վարժությունը:

Որինակ.

Յենթադրենք ուսուցիչն անցել է գործիական հոլով (Հայոց լեզվի քերականության դասադիրք, էջ 20) Պետք է բացել տալ «Քերականության և ուղղագրության վարժությունների դասադիրք»-ի 47 էջը, վրոտեղ § 68-ում ասված է.

«Արտագրել գործիական հոլովով գրված գայալաները և գրել նրանց բացառական ձևը»:

Այդ պատվերը պետք է բարձր կարգալ և հաջորդ 48 էջում ցույց տալ որինակը, վրոտեղ գրված է.

Որինակ՝

Գործիական
Փոփոցներով

Բացառական
Փոփոցներից

Դրանից հետո գրատախտակի վրա բացատրել վարժության պրիոմը և ապա վարժության տետրում զրել տալ ամսաթիվը և «վարժություն» բառը, ու հետո թողնել, վրա վարժությունը կատարեն: Դասի վերջում, յեթե ժամանակ մնաց, պետք է ստուգել, թե ինչպես և կատարված վարժությունը: Այս ու այն աշակերտին հարցնելով՝ պետք է ուղղել տալ բոլոր նրանց, ովքեր սխալ են կատարել:

Յերբ ուսուցիչը համոզվում է, վրա կանոնը հասկացել են և վարժությունը կատարում են, պետք է միտնդամայն նման վարժություն տալ և տանը, առաջարկելով ողտագործել կամ վարժությունների զիրքը կամ, ալելի լավ է, զրական ընթերցանության դասա-

դերքը: Հիշված վարժությունները բավական չեն, անհրաժեշտ և քերականությունը կարելի նաև գեղարվեստական խոսքի հետ: Գրական ընթերցանության ժամին, յերբ կընթերցվի յերկը, կվերլուծվի և կմշակվի գրական տեսակետից, կարելի յե կարգացած գեղարվեստական յերկի վրա կատարել նաև բանավոր վարժություն քերականական նույն կամ անցած թեմաների չուրջը, ոգտադործելով գեղարվեստական խոսքը՝ լեզվի կանոնը յուրացնելու համար:

Այսպիսով քերականության դասը կլինի վոչ միայն կանոն անդիւր անելու դաս, այլև կարգալու, դրելու, կանոնավոր խոսքը մշակելու դաս:

Գրական ընթերցանության այդ դասը կարող և ընդգրկել 1—2 ժամ: Գրական ընթերցանության դասի պլանը պետք է լինի մոտավորապես հետևյալը.

1. Կարճ գրույց կարգացվելիք յերկի առթիւ 2—3 րոպե:

2. Ուսուցչի գեղարվեստական ընթերցանությունը (ամեն ժամին պարտադիր չե) — 5 րոպե:

3. Աշակերտների կարդալը և բառերի բացատրություն — 15 րոպե:

4. Գրական վերլուծություն 15—17 րոպե:

Յեթե յերկը մեծ է, կարելի յե կարդալը կատարել մեկ ժամում, իսկ վերլուծությունը՝ մյուս ժամում:

5—7 դասարաններում գրական ընթերցանության ժամին պետք է դարգացնել աշակերտների որինակելի կարդալու տեխնիկան, պետք է սովորեցնել գեղարվեստական ընթերցանության պրիմները, հանձնարարել վոտանավորներ անդիր անել տանը և հարցնել դասարանում, ծանոթացնել գրական յերկի զանազան

տեսակներին (արձակ, չափածո, լիրիկական բանաստեղծություն, պատմվածք, առակ, առած, դրամա, յերգիծանք, կատակերգություն և այլն) և ցույց տալ նրանց հիմնական հատկանիշները, դրսևորել գեղարվեստական խոսքի առանձնահատուկ զծերը և պրիմները (համեմատություն, փոխաբերություն, մակդիր, չափազանցություն, ալլաբանություն, պատկերավորություն և այլն): Գրական ընթերցանության դասերին պետք է վերլուծել գեղարվեստական ստեղծագործության տիպերը, բնութագրել գործող անձանց (համեմատել, հակադրել, լրացնել, քննադատել և այլն) և այդ բոլորը կատարել գրական յերկից ցլատաներ բերելով, յերկի այս կամ այն մասն ոլտագործելով և այլն: Այդ դասարաններում պետք է մատչելի ձևով ծանոթացնել նաև հեղինակների կենսագրությանը: Պետք է սովորեցնել, վոք աշակերտները սեփականացնեն գեղարվեստական յերկի լեզուն, բառերը, հաջողված պատկերները, վոճերն, ու դարձվածքները և այլն: Լեզվի և գրական ընթերցանության դասերի պետք է մշակել և նախապատրաստել դրավոր աշխատանքները:

Գրական յերկի ընթերցանությունը, վերլուծությունն ու լեզվի ուսումնասիրությունը պետք է ոգտադործել Մեծ Ոորհրդային Միության դեռահաս քաղաքացու մեջ կոմունիստական աշխատահայացը մշակելու համար, պետք է մշակել նրա մեջ ապագա իրավագոր խորհրդային քաղաքացու բարձր զծերը, սերը դեպի իր Ոորհրդային Հայրենիքը, նվիրվածություն կոմունիզմի մեծ գործին, Լենինի — Ստալինի մեծ գաղափարներին: Վերլուծության միջոցով պետք

և կոմունիստական վերաբերմունք մշակել դեպի յերկիր մեջ արտացոլված իրականությունը, պատկերված գործող անձինք և այլն: Դասարանական ընթերցանության զուգընթաց պետք է ղեկավարել անային ընթերցանությունը: Յուրաքանչյուր քառորդի համար պետք է դասարանի պատին կախ տալ տանը կարդալու պարտադիր գրականության ցուցակը, սխառեմատիկ կերպով ստուգել, վոր մինչև վոչ լրիվ միջնակարգ տվարտելը մեր յերեխաները կարդացած լինեն հայկական, ռուսական և ոտոր գրականությունը բոլոր մատչելի յերկերը: Միայն այս ձևով, այսպես աշխատելով մենք կկարողանանք կատարել Համ. Կ(բ)Կ Կենտկոմի այն պահանջները, վորը դրված են դպրոցի առաջ՝ դպրոցին, վերաբերող պատմական վորոշումների մեջ: Միայն այս կերպ մենք կտանք ըստ ամենայնի գրադետ և «գլխություն հիմունքներին տիրապետող» միջնակարգավարտ խորհրդային քաղաքացի:

2. ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԸՆԹԵՐԳԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ V—VII ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ

Կարդալու ուսուցումը տարրական դպրոցում տվարտվում է: Միջնակարգ դպրոցին, մնում է կատարելագործել այն և միաժամանակ վարժեցնել աշակերտներին գեղարվեստական ընթերցանությունը: Բայց յեթե նկատվի, վոր աշակերտությունը կարդալու անպատրաստ է, սխալներով է կարդում, վարժ և արտահայտիչ չի կարդում և այլն, այդ դեպքում ոգտագործելով թե՛ լեզվի և թե՛ գրականության ժամելը, պետք է լրացնել պակասը:

Կարդալու թերին լրացնելու համար պետք է դարգացնել աշակերտների մեջ ընթերցասիրություն և կարդալ տալ նաե տանը: 5—7-րդ դասարանների գրական ընթերցանության հիմնական կողմերից մեկն է գեղարվեստական ընթերցանությունը:

Գեղարվեստական ընթերցանության ժամերը միաժամանակ նաե գրականության ժամեր են: Յուրաքանչյուր դրական տեսակ պահանջում է կարդալու առանձին պրիմներ, չափածոն չատ ավելի դժվար և կարդալ, քան արձակը: Կարդալու ընթացքում պետք է նկատի առնել հետևյալը.

ա) Պահպանել տրամաբանական շեշտը. վորից կախ-

ված է նախադասութեան բարձրագոյն աշխարհ, ինչպէս ցանկացել է հեղինակը:

Սովորաբար նախադասութեան մեջ շեշտուած է այն բանը, վոր տրամաբանորեն հանդիսանում է խոսողի կամ գրողի արտահայտած մտքի առանցքը, որինակ՝

Ամպերը դանդաղ ուղտերի նման

Նոր են ջուր խմած՝ ձորից բարձրանում,

Քարատ քիկումից ջաքիմդաղ լեռան

Նոր է արևը պռունկը ետնում:

Այս յերկու տողի մեջ տրամաբանական շեշտն ընկած է նոր բառի վրա, վորովհետև հեղինակը հետադառնցքերը նկարագրելիս ցանկանում է ցույց տալ ժամանակը և ասա այդ նոր բառն արտահայտուի է հեղինակի ցանկությունն, այն է՝ թե վաղ առավոտ է: Յնթե հեղինակը կարիք ունենար նշելու, թե ամպերը բարձրանում են և այս մոմենտն այս կամ այն արժեքն ունի հետադաշում նկարագրվող անցքերի համար, այն դեպքում տրամաբանական շեշտը կդրվեր ամպեր բառի վրա և կլիներ.

«Ամպերն են դանդաղ ուղտերի նման...»

Նույն ձևով, յեթե հեղինակը ցանկանում է, վոր ավելի նախադասութեան մեջ նկատվի ամպերի և ուղտերի նմանութիւնը, նա տրամաբանական շեշտը կդնէր նման բառի վրա և կստացվեր. «Ամպերը դանդաղ ուղտերի նման են ձորից բարձրանում» և այլն:

Հայերենն ունի այն առանձնահատկութիւնը, վոր ոժանդակ բայը միշտ դրվում է այն բառի կողքին, վորը կրում է տրամաբանական շեշտը, ուստի այնպիսի նախադասութիւններ, վորոնց ստորոգյալը կազմված է ոժանդակ բայով, շատ ամփելի հեշտ է կարգաւ: Բառակապ է միայն վորոշել, թե ոժանդակ բայը վոր

բառի կողքին է դրված, և ապա պարզ կլինի թե վորտեղ պետք է դնել տրամաբանական շեշտը: Այդ միջից դժվար է լինում այն դեպքում, յերբ ստորոգյալն արտահայտված է պարզ ժամանակներով: Այդ դեպքում տրամաբանական շեշտի տեղը մտքից պետք է հստականալ, հետևաբար և մտքում նախապես մի անգամ պետք է կարդալ և ապա միայն կատարել գեղարվեստական ընթերցանութիւն:

բ) Գեղարվեստական ընթերցանութեան համար կարևոր է նաև դադարը:

Դադարը լինում է յերեք տեսակ՝ տրամաբանական, քերականական և գեղարվեստական: Տրամաբանական դադարը սովորաբար կատարվում է այն բառերից առաջ, վորոնց իմաստը հասկանալը կարդացողը համարում է կարևոր: Այդ դադարը տրվում է նրա համար, վորպէսզի լսողի մեջ ստեղծվի սպասողական տրամադրութիւն, վորը հնարավոր կդարձնի ավելի լավ ըմբռնել դադարից հետո արտասանած բառերը:

Որինակ՝ Ամեն քոչում (փոքրիկ պառուգ) իր ուժի չափ է քոչում,

Ամեն մի յերգ (փոքրիկ պառուգ) իրեն կարգին է հնչում:

Քերականական դադար կոչվում է այն դադարը, վոր կատարվում է ըստ կետագրական նշանների:

Որինակ՝ «Փովեց... (պառուգ) Ու միշտ, (պառուգ) Բանի վոր կա Շահ ու գերի (պառուգ), ստորի ու տեր (պառուգ),

Ձի լինելու յերկրի վրա

Վո՛չ շիտակ խոսք, (պառուգ), Վո՛չ կյանք, (պառուգ), Վո՛չ սեր (պառուգ):

Գեղարվեստական ընթերցանության ժամանակ կատարվում է նաև գեղարվեստական դադար: Այդ դադարը տրվում է սովորաբար այն ժամանակ, յերբ գրվածքի մեջ գեղարվեստական տրամադրությունը փոխվում է, կամ յերբ կարգացողը ցանկանում է, վոր լսողներն անջատեն նախորդ միտքը հաջորդից, այդ նոր միտքը լսեն նոր տրամադրությունը, վորով նախորդ մտքի գեղարվեստական հույզը պահպանվում է լսողի մեջ: Որինակ՝ Պուշկինի «Ձմռան յերեկոն» կտրգալիս՝ գեղարվեստական դադար պետք է տալ՝ մեկ՝ յերկրորդ տնից հետո, մեկ ել 5-րդ տնից հետո, վորովհետև հուզական վիճակը փոխվում է յերկու անգամ՝ այդ տներից հետո: «Թագավորն ու չարչին» յերկը կարգալիս՝ գեղարվեստական դադար պետք է տալ «հե՛յ, ով կուզի քեյ ու ասե՜դ» տողից առաջ, ապա «Մեր անեծքը յերկինք հասնի»... տողից հետո, ապա «Սուտ եր» նախադասությունից հետո, ապա «Վոչ շիտակ խոսք, վոչ կյանք, վոչ սեր...» տողից հետո և վերջապես փովեց... բառից հետո:

զ) Գեղարվեստական ընթերցանության համար կարևոր է պահպանել նաև տանը, յուրաքանչյուր գործող անձի ինտոնացիան և այլն:

Գեղարվեստական ընթերցանությունն առանձին արժեք է ստանում միջնակարգ դպրոցներում այն պատճառով, վոր այստեղ աշակերտությունն սկսում է լուրջ կերպով ծանոթանալ նախ գրական յերկերին, ապա գրական տեսակներին (5-7 դասարաններում) և ապա ուսումնասիրել գրողների ամողջական գրվածքները (8-10 դասարաններում): Պետք է հիշել, վոր գեղարվեստական ընթերցանության դասն իսկական գրականության դաս է:

Վորպեսզի աշակերտները սովորեն գեղարվեստորեն կարդալ, պետք է ուսուցչի ներկայությամբ ու ուսուցչի ցուցումներով կարդան, ապա ամբողջ դասարանով քննեն, թե ի՞նչ թերություն ունի սրա կամ նրա կարդալը: Պետք է թույլ տալ, վոր աշակերտները քննադատեն և ապա իրենք իրենց կողմից ցույց տան, թե ի՞նչպիսի կարդալն է ճիշտ, այդ դեպքում վերջին խոսքը պետք է պատկանի ուսուցչին: Ավելի լավ կլի նի աշակերտների գեղարվեստական ընթերցանությունն անցկացնել տվյալ յերկը բազմակողմանի վերլուծություն և քննության յենթարկելուց հետո: Յերբ յերկը լավ հասկանալի դառնա աշակերտներին, կարդալն ել կհեշտանա: Գեղարվեստական ընթերցանության համար կարևոր նշանակություն ունի վոտանավոր անդիր անելը. չեմ խոսում ել այն մասին, վոր վոտանավորներն անգիր անելն աշակերտներին շատ կոժանդակի՝ բանավոր ու գրավոր խոսքին և ընդհանրապես, լեզվին տիրապետելու համար: Վոտանավոր կարդալիս, աշակերտները տենդենց ունեն միապաղաղություն մտցնելու, մի առանձին տոնով կարդալու, յերկարացնելով տողերի վերջին բառերը: Այդպիսի ընթերցանությունը, կամ վոտանավորի՝ նման արտասանությունը յերբեք չպետք է քաջալերել: Անմիջապես պետք է ցույց տալ այդ թերությունը և աշխատել վերացնել այդ:

Գեղարվեստական ընթերցանությունից առաջ պետք է հանձնարարել աշակերտներին մտքում նախապատրաստվել բարձր կարդալու համար: Ուսուցչիչը պետք է տեղն ու տեղը բացատրի, թե ինչ կողմի վրա պետք է ուշադրություն դարձնել, ինչ տոն ընտ-

բել, ինչը չենտել, վո՛րտեղ պետք է դադար տալ և այլն :
Մի քանի այդպիսի պարապմունքներից հետո պետք է
սալ անձանոթ վոտանավորներ և առաջարկել տանը
կոմ թե դասարանում, առանց ուսուցչի բացատրու-
թյան, նախապատրաստվել բարձր կարգալու համար :
Այստեղ գործադրվում են միաժամանակ նաև լուս
կարգալու պրիմները, այդ հենց առիթ է դառնում,
վոր աշակերտները սովորեն լուս կարգալ :

Գեղարվեստական ընթերցանությունը, ի վերջո,
դաստիարակչական և ուսուցողական մեծ նշանակու-
թյուն ունի : Միայն գեղարվեստական ընթերցանութ-
յան սովոր մարդն է զգում գեղարվեստական յերկի
ամբողջ արժեքը, գեղարվեստական հաճույքը, սեր ու
հակում դեպի գրականությունը : Հասկանալի յե, վոր
յերբ աշակերտի մեջ կա այս սելոն ու հակումը, ապա
գեղարվեստական գրականությանը լայն կերպով
ծանոթանալու նրա ձգտումը, այսինքն՝ ընթերցասի-
րությունը միանգամայն ապահովված կլինի : Իսկ
գեղարվեստական գրականությունը մշակում է աշա-
կերտի հուղական աշխարհը, կաղմակերպում նրա
ղղացմունքները, աղմկացնում և ներդաշնակ դարձ-
նում գրանք, նրա մեջ մշակում սոցիալիստական
հասարակության ապագա քաղաքացու հատկանիշնե-
րը :

3. ԳՐԱԿԱՆ ԸՆԹԵՐԾԱՆՈՒԹՅՈՒՆԸ V—VII

ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ

Սորհրդային մեթոդիկայի նոր դրույթով 5—7 դա-
սարաններում գրականության առարկան փոխարին-
վում է «գրական ընթերցանությամբ» : Այս տերմինը
մեթոդիկայի մեջ գործածվել սկսեց վերջերս : 5—7
դասարաններում գրականության առարկան ուսուցչու-
թյան կողմից սխալ եղ հասկացվում : Վոմանք գրակա-
նություն ասելով հասկանում եյին գրականության
պատմություն, վոմանք՝ հեղինակների գրական քըն-
նադատական վերլուծություն, վոմանք ել՝ գրական
սոցիոլոգիական լերկ գատողություն հեղինակի և
նրա յերկերի չուրջը : Իրապես 5—7 դասարանների
ծրագրում «գրականություն» ասելով պետք է հաս-
կացվի գործնական ծանոթություն հեղինակների մատ-
չելի յերկերին և գրական յերկի տեսակներին : Հենց
այդպես հասկանալու համար ել «գրականություն»
տերմինն այժմ փոխարինված է «գրական ընթերցա-
նություն» տերմինով :

5—7 դասարաններում գրական ընթերցանության
նպատակն է աշակերտներին ծանոթացնել գրական գե-
ղարվեստական յերկի զանազան տեսակներին (արձակ,
չափածո, պատմվածք, հեքիաթ, վեպ, առակ, լիրի-

կական բանաստեղծություն, բալլադ, պոեմ, յերգե-
ծանք, դրամա, կոմեդիա և այլն): Դրա հետ միաժա-
մանակ գրական ընթերցանության միջոցով պետք է
սովորեցնել վերլուծելու գեղարվեստական յերկը թե՛
լատ բովանդակության և թե՛ լատ ձևի:

Գրական ընթերցանության յերրորդ նպատակն է ա-
շակերտին սիրելի՝ դարձնել գիրքը, զգալ տալ նրան,
թե վորքան շատ բան կարող է սովորել նա դրեքց,
վարժեցնել նրան և հմուտ դարձնել գրքով ինքնուրույն
աշխատելու:

Այս նպատակներին ծառայել կարող է գալոցական-
ների համար առավելագույն չափով հաճելի գեղ-
արվեստական յերկը:

Ուստի լատ բովանդակության վերլուծելիս՝ նախ
պետք է գրական յերկն ուշադրությամբ կարդալ և
կարդալ տալ, վորոչել յերկի տեսակը, նյութը, բո-
վանդակությունը, եյական կողմերը, հիմնական պատ-
կերները, գործող անձինք, պատմողական մասերը,
նկարագրական հատվածները և այլն: Այնուհետև
պետք է մանրակրկիտ կերպով վերլուծել յերկում
սոված պատկերները սոցիալիստական ուսուցիչի տե-
սակետից: Այդ նույն տեսակետից պետք է վերլուծել
դրոժող անձանց նկարագիրը և աշակերտի մեջ վերա-
բերմունք մշակել թե՛ գրական և թե՛ պատկերում
գործող անձանց նկատմամբ: Առանձնապես պետք է
կանգ առնել գործող անձերի, հիմնականում գլխավոր
գործող անձանց բնութագրերի վրա: Այդ մոմենտը
պետք է ոգտագործել աշակերտներին կոմունիստական
ինտերնացիոնալ դաստիարակություն տալու և խոր-
հրդային հայրենիքը բուռն սիրող քաղաքացի պատ-

բանաելու նպատակների համար: Միաժամանակ պետք
է մշակել աշակերտների մեջ կոմունիստական վերա-
բերմունք դեպի այն դեպքերն ու անցքերը, վորոնք
նկարագրված են յերկի մեջ (Ժողովրդի համար կրոնի
վնասակարության գիտակցումը «Սաքուն ուխտ դնաց»
պատմվածքի միջոցով, դյուղացիության ապստամբա-
կան շարժումների անհաջողությունը պրոլետարիատի
պայքարից կտրված լինելու պատճառով, «Չլուչո-
բար» պատմվածքի միջոցով և այլն):

Բովանդակությունը մշակելու հետ միաժամանակ,
մասամբ և հետո, պետք է մշակել յերկերի ձևը:
Կանգ առնելով գեղարվեստական նկարագրությունների
վրա, աշակերտների մեջ կարելի յէ մշակել սեր դեպի
բնությունը, ստեղծել կարողություն բնության գե-
ղեցկությունները ճանաչելու և գնահատելու, միաժա-
մանակ և ճանաչելու ու գիտակցելու այն պրիմները,
վորոնց միջոցով հեղինակն իր յերկի մեջ վերաբա-
րում է բնությունը:

Յերկի տեսակները սովորելիս աշակերտը պետք է
հասկանա արձակի և չափածոյի եյական տարբերու-
թյունները, գաղափար կազմի հանդի և աժանակի մա-
սին, չափածո գրվածքի յերաժշտական ներդաշնակու-
թյան մասին, հասկանա, թե հեղինակն իր արվեստով
լեզուն ի՞նչպես է բարձրացնում մինչև յերաժշտու-
թյան աստիճանը: Արձակի մեջ վերլուծելով բնության
պատկերներն ու մարդկային նկարագիրները՝ աշակե-
րտը պետք է հասու դառնա այն պրիմներին, վորով
հեղինակն առակների խորհրդածու խոսքը և գրույցի
սովորական խոսքը գարձնում է հուզական ապրումնե-
րի միջոց և տղբյուր:

Այս միջոցով խորհրդային պատանի սերունդը գրա-
կանությունը կդարձնի գեղարվեստական հաճույքի ու
լավատեսութեան, կոմունիստական աշխարհայացք եւ
խորհրդային քաղաքացու ուժեղ կամք մշակելու մի-
ջոց:

Գրական ընթերցանութեան հիմնական նպատակերից
է նաեւ լեզու սովորեցնելը: Լեզու սովորելու լավա-
գույն միջոցը գեղարվեստական յերկն է: Գրեարվես-
տական յերկի մեջ լեզուն ստանում է հատուկ պատկե-
րավորութիւն: Ուստի կարգապահ գրվածքը կամ հոգ-
վածքը գրական գեղարվեստական վերլուծութեան յեն-
թարկելուց հետո պահանջվում է նաեւ լեզվական վեր-
լուծութեան յենթարկել այն: Կարգալով գեղեցիկ տե-
ղերը՝ ուսուցիչը մասնացույց եւ անում այն վոճերի,
այն դարձվածքների վրա, վորոնք գեղեցիկ են, պատ-
կերավոր, հղկված ու անխալ: Վոճի ճշգրտութիւնը
եւ կանոնավորութիւնը լեզվական պահանջներից ա-
մենահիմնականն է: Աշակերտներին ցույց տալով այդ-
պիսի վոճերը, պետք է ներշնչել, վոր դրանք յուրաց-
նեն, վորի առնեն հեղինակից, կամ իրենք կողմեն:
Այդ դեպքում առանձնապէս կարեւորութիւն է ստա-
նում վստանալորներ եւ կամ արձակի գեղեցիկ կտոր-
ներ անդիւր անել տալը:

Պետք է սովորեցնել, վոր աշակերտներն իրենց բա-
նալոր խօսքի մեջ հարմար կերպով մեջ բերեն հեղի-
նակների թե՛ շարժանքից եւ թե՛ արձակից: Այդ վար-
ժութիւնը հետագայում ոժանդակում է, վոր աշա-
կերտն ինքնուրույն խօսք կազմելիս՝ պատկերաւորի
իր լեզուն, ճշգրտի, կանոնավորի ու հարստացնի իր
վոճը: Վոճական վերլուծութեան հետ միասին պետք

է վերլուծել նաեւ հեղինակի բառապաշարը եւ բառա-
գործածութիւնը: Կոնկրետ որինակներով պետք է դա-
շափար տալ համեմատութեան մասին, ցույց տալ, թե
ավելաւ հեղինակն ի՞նչ բառերով ի՞նչպիսի համեմա-
տութեան է կատարում: Որինակ՝

«Չարքու կերպ մտած՝ ինչպէս վիշապ ոճ՝
Անցնում եր ինքը՝ Դահ Արաս արքան» (Հով.
Թում.):

Ի՞նչն ավելի հաջող կարող է լինել, քան շահին վի-
շապ ոճի հետ համեմատելը: Այդ մի համեմատութիւ-
նը միայն պատկերացնում է այն բռնութիւնը, վոր
աշխատավորը կրում է թագավորներից եւ նրան պաշտ-
պանող դասակարգից: Այդ համեմատութիւնը
միայն կարող է բացատրել այն ահռելի ատելութիւնը,
վոր աշխատավորը կարող է զգալ եւ զգում է իրեն
չահագործողի հանդեպ:

Լեզվական պատկերավորութեան այլ կարեւոր տեսա-
կներից մեկն է նաեւ մակդիրը, եպիտետը: Պետք է
աշակերտին զգալ տալ հեղինակի գործածած եպիտե-
տների գեղեցկութիւնը, հաջող ընտրութիւնը եւ հիմ-
նավորել, թե ինչու եպիտետը դարգանում, ավելի ցա-
յուն է դարձնում հասկացողութիւնները: Որինակ՝

«Ծով Արաղի ալիւ հասանք» (Հով. Թում.):

«Լուեց արքան արշաւարքու» (Պուչկին)

«Իմ բաղեներ արագաքի» (Պուչկին):

Առաջին նախադասութեան մեջ Արաղի «ծով» եպի-
տետը պատկերացնում է այն՝ վորպէս մեծ գետ:
Յերկրորդ նախադասութեան «արշաւարքու» եպիտետն
իսկութեամբ բնորոշում է արքային, ինչպէս վոր նա յե-
րբորդ նախադասութեան «արագաքի» եպիտետը մի
հուզող հիշողութիւն է ստեղծում բաղենի, այդ ան-

վախ և օրընթաց թռչունի մասին: Այսպես յուրաքան-
չյուր եպիտեոս առարկան ճանաչել և տալիս նրա բնու-
յունը կողմով և խոր տպավորում կարգացողի հիշողու-
թյան մեջ:

Եպիտեոսների հարուստ որինակներ կդանենք ժողովր-
դական վեպի մեջ: Մեր մեծ բանաստեղծ Հ. Թուման-
յանը, պահպանելով ժողովրդական վեպի վոգին, ավել
և եպիտեոսների գործածության սքանչելի որինակներ.
որինակ՝

—Վա՛յ, Դավիթ, ասավ, մահս տանի քեզ.

Դո՛ւ պետք է են հոր զավակը լինե՞ս...

Ո՛ւր է քու հոր հրեղեն ձին,

Ո՛ւր է քու հոր թուր կայծակին,

Ո՛ւր է քու հոր դռան վռակի,

Խաչ պատրաստին իր աջ բազկի,

Ո՛ւր է քու հոր ծալ—ծալ կապեն,

Գուրգը պողպատ, թամբ սաքափեն,

Վոր յեկել են, ա՛յ խեղճ ու ծուռ,

Ինձնից կուզես եչ ու շամփուր...

Գեղարվեստական խոսքը զարգարուն և լինում նաև
փոխաբերություններով (մետաֆորա...) որինակ՝

Ասում են՝ դեջ ես կտրել դու մերին:

Իրանցն ասում են ու քեզ չեն լսում,

Մենչե չտեսնես մեկին, պիտերին...

(Հ. Թում. «Մերունու հառաչանք»):

Այստեղ տեսնել բառը գործ է ածված կաշառ
տալու իմաստով:

կամ՝

«Ախպեր, ասեցինք, ի՞նչ արիք ի՞րար.

եռսք եմք կովացրել, արին հո չա՞րիք...»)

(Հ. Թում. «Մերունու հառաչ.»):

«Եռսք եմ կովացրել» կապակցությունը գործ է ած-
ված «վիճարանել» իմաստով, «արին հո չարիք» կա-
պակցությունը՝ վիրավորել կամ «սպանել» իմաստով:
Փոխաբերությունները խոսքի բովանդակությունը
խորացնում են և միտքը զարճնում ավելի հասուն:

Փոխաբերությունից պետք է տարբերել ալլաբանու-
թյունը, վորը մի միջոց և հասկացնել տալու մի միտք.
վորն ուղղակի բառերով զգվար է ասել կամ՝ խոսողը
խառափում է ասել: Ալլաբանությունը խոսողին ավելի
քիչ է պատասխանատու զարճնում իր ասածի համար,
վորովհետև հաճախ ալլաբանությամբ ասածը դանա-
զան տեսակ կարելի չի բացատրել:

Ալլաբանության լավ որինակներ ունի Հ. Թուման-
յանը.

Ռբինակ՝

«Մեր տանուտերն ել, ասոված է որհնել,

Եսպես մի բան եր պակաս նրան ել.

Մեկի պոչը միշտ մեկելի տակին...»

Ալլաբանությունն ուսուցանելիս՝ պետք է ոգտա-
գործել առածները, առանձնապես առակները կամ
հեքիաթները, ցույց տալու համար, թե ինչպես եր աչ-
խատալոր ժողովուրդն իր վերաբերմունքն արտահայ-
տում դեպի բոլոր չահագործողները զատակարարյին
հասարակության պայմաններում, ինչ ձևով եր ժողո-
վուրդը զատապարտում չահագործող զատակարարի
այս կամ այն ներկայացուցչի բնավորության այս կամ
այն դիժը:

Գեղարվեստական խոսքի հատկանիշներից մեկն է
նաև հիպերբոլան (չափազանցությունը): Հիպերբոլան

հաճախ և ուղտագործվում ժողովրդական վեպի մեջ, ավելի հաճախ՝ հեքիաթների մեջ:

Անձնավորելով իրեն վորեն հերոսով՝ ժողովուրդն ուժանում է նրան ֆիզիկական և բարոյական գերընտան հատկություններով: Հիպերբոլայի միջոցով ժողովուրդն արտահայտում է իր անսահման ուժի գիտակցումը, յերբ ինքը միացած է հայրենի շահագործողների և ոտար բռնավորների և ագրեսորների դեմ: Հիպերբոլայի լավ որինակներ կան «Սասունցի Դավիթ»-ի մեջ. որինակ՝

«Յեկան քաշեցին՝ թե զոռով տանեն,
Թափ տվալ, մարդկանց զցեց դես ու դեն,
Փոքրիկ նկույթը մի փարի առալ,
Ապառաժ փարից կրակ դուրս թռալ»:

կամ՝

«Բարկացալ Դավիթ, չափը չպրտեց,
Տվալ Կողբադնի գլուխը ջարգեց,
Չափի փըշրամբը պատն անցալ, գնաց,
Մինչև որս էլ դեռ գնում է թռած»:

Այդ յեղանակով պետք է վերլուծել տվյալ յերկի մեջ գործածած համանիշները, հակադրությունները, անձնավորումները և պատկերավոր խոսքի բոլոր այլ և այլ միջոցներն ու պրոմները:

Ուսուցման ընթացքում պետք է աշխատել, վոր աշակերտները լավադույն պրիմները գործածեն իրենց բանավոր և գրավոր խոսքի մեջ, սկզբում՝ մոտի առնելով հեղինակից, հետագայում՝ նաև ինքնուրույնաբար բառակապակցություններ կաղմելով:

Գրական յերկի լեզվական մշակումը 5-7 դասարանների գրական ընթերցանության յերկրորդ հիմնական

կողմն է, վոր լրիվ է դարձնում յերկի ըմբռնումը և ուժանդակում աշակերտի բանավոր և գրավոր խոսքի մշակմանն ու կատարելագործմանը: Գրական ընթերցանության դասի ընթացքն ընդհանուր դժեղով պետք է լինի հետևյալը.

1-ին վարիանտ

1. Հին դասի հարցում:

2. Զրույց նոր դասի շուրջը (խոսել գրական յերկի այն տեսակի մասին, վորին պատկանում է ավանգվելիք յերկը):

3. Ուսուցչի գեղարվեստական ընթերցանություն:

4. Բառերի իմաստի բացատրություն:

5. Աշակերտների գեղարվեստական ընթերցանություն:

6. Յերկի իմաստի պարզաբանում:

7. Յերկի գրական վերլուծական մշակում:

8. Յերկի լեզվական վերլուծական մշակում:

2-րդ վարիանտ

1. Նախապատրաստական զրույց (բացատրել նախ այն բառերը, վորոնք կարող են խանգարել իմաստը հասկանալուն):

2. Աշակերտների գեղարվեստական ընթերցանություն:

3. Գեղարվեստական ընթերցանության պրիմների քննություն:

4. Յերկի գրական գեղարվեստական և լեզվական վերլուծություն:

5. Յերկի բովանդակության վերլուծում:

Գրական ընթերցանության դասը խիստ պատասխա-

Ֆաստու դաս է, ուստի ուսուցիչը, ինչպես ամեն մի դասի, նույնպես և դրա համար պետք է նախապատրաստվի:

Նախապատրաստության աշխատանքի ժամանակ ուսուցիչը պետք է ինքը սովորի գրական յերկը գեղեցիկ կարգալ, պետք է նշի գեղեցիկ պատկերներ արտահայտող սուղերը, գտնի և դասադրքի իր որինակում ընդգծի հեղինակի լեզվական պրիմները և այլն: Մենհրաժեշտ է, վոր ուսուցիչն ստուգի, թե յերկում պատահած բոլոր բառերն են իրեն ծանոթ, իսկ յեթե ծանոթ են, բոլոր բառերը կարող է բացատրել:

Ուսուցիչը պետք է պարզի նաև, թե յերկն ինչպիսիք գրական և լեզվական գիտություն է մատուցելու աշակերտին, ինչ չափով է նպաստելու յերեսայի կոմունիստական աշխարհայացքի կազմակերպմանը, նրա գրական և լեզվական ճաշակը մշակելուն և այլն:

Գրական ընթերցանությունն ուսուցչին ընդհուպ մոտեցնում է Համ.Կ(բ)Կ Կենտկոմի առաջադրած խնդիրներին լուծմանը, օոցիալիզմի համար պատրաստված և անվեհեր մարտիկներ պատրաստելու խնդրի լուծմանը: Մեր խորհրդային ուսուցչության պատվի գործն է հիմնովին վերակառուցելու իր աշխատանքները և ուսուցման գործը վարելու կուսակցության և փառալարության վորոշումների վորդով:

3 Ս Ն Կ

42

1. Ինչպես աշխատել V—VII դասարանների հայոց լեզվի և գրական ընթերցանության դասագրքերով 3

2. Գեղարվեստական ընթերցանության ուսուցումը V—VII դասարաններում 11

3. Գրական ընթերցանությունը V—VII դասարաններում 17



ՀՀ Ազգային գրադարան



NL0246643

147

10. 982

9. 156. 40 h.